

*Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից
ձևավորված 2010 թվականի չորրորդ եռամսյակի, այդ
թվում՝ դեկտեմբեր ամսվա նախադեպի ամփոփում*

Հաշտարարի գրասենյակը 2010թ.-ի չորրորդ եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 165 բողոք: Քաղաքացիների կողմից ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 165 բողոքներից 35-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ ելության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 130 բողոքներից 50-ը չորրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով:

2010թ.-ի չորրորդ եռամսյակում ներկայացված ընդհանուր բողոքների քանակը	165
1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	130
1.1. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից, սակայն Հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	66
1.2. Բավարարվել են Կազմակերպության կողմից՝ Հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որն օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	4
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվել պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր Հաճախորդի՝ որպես սպառողի, շահերի ոտնահարման փաստը	10
1.4. Ընդունվել են քննության գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	50
1.4. 1. վարկային գործարքների հետ	11
1.4.2. ապահովագրական հատուցումների հետ	6
1.4.3. գրավատների գործունեության հետ	31
1.4.4. վճարահաշվարկային ծառայությունների հետ	2

2010թ.-ի չորրորդ եռամսյակում գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքներ, ուղղված՝	50
Բանկերի դեմ	11
Վարկային կազմակերպությունների դեմ	2
Ապահովագրական ընկերությունների դեմ	6
Գրավատների դեմ	31

Հաշտարարի գրասենյակը ղեկտեմբեր ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 46 բողոք: Քաղաքացիների կողմից ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 46 բողոքներից 11-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 35 բողոքներից 13-ը ղեկտեմբերին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության:

2010թ.-ի ղեկտեմբերին ներկայացված ընդհանուր բողոքների քանակը	46
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	35
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	19
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որը օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	1
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	2
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, կապված են՝	13
1.4. 1. ապահովագրական դեպքերի հետ	2

1.4. 2. վարկային գործարքների հետ	5
1.4. 3. գրավատների գործունեության հետ	6

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am Web: www.fsm.am